Universitäts- und Landesbibliothek Bonn

# Xorhrdatetr ...

i Venetik, 1874

urn:nbn:de:hbz:5:1-11354

Visual Library

# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

## ՍՐԲՈՅ

# ՊԱՏԱՐԱԳԻՆ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՄԵՄԱՏ ՕՐԻՆԱԿԻՆ ՏՊԵԼՈՅ Ի ՀՌՈՎՄ 1677



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1874



Պայծառացիր եկեղեցի ա̃յ ընդ ծննդեան Սրբոց Վկայիցն ,
որք նահատակեցան 'ի յերկրի , և 'ի յերկինս պսակեցան :



# ՕՐԷՆՔ ԱՐԿԱՆԵԼՈՅ

## ՍՊԱՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

*Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել, պարտ է այսպէս խորհրդաբար զգեստաւորիլ.*

Մտցէ յաւանդատունն, ճանդերձ սարկաւագօքն, ուր զգեստքն են պատարագի։ Եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի, ասասցեն ապա սաղմոս ՁԳ.

### ԿՑՈՐԴ

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

### ՓՈԽ

Յիշեա Տէր զԴաւիթ, և զամենայն հեզութիւն նորա։

Որպէս երդուաւ Տեառն, և ուխտս եդ Աստուծոյ Յակոբայ։

Թէ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ. եթէ ելից յանկողինս մահճաց իմոց։

Թէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտևանաց իմոց, կամ հանգիստ կռանաց իմոց, մինչև գտից զտեղի յարկի տեառն Աստուծոյ Յակոբայ։

Ահա լուաք զնմանէ յԵփրաթայ. և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց։

Մտցուք 'ի յարկս նորա. երկիրպագցուք 'ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա։

Արի Տէր 'ի հանգիստ քո՝ դու և տապանակ կտակի սրբութեան քո։

Երիցունք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Վասն Դաւթի ծառայի քո, մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ։

Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ, և ոչ ստեաց նմա. 'ի պտղոյ որովայնի քոյ նստուցից յաթոռ քո։

Թէ պահեսցեն որդիք քո զուխտս իմ, և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա։

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո։

Հաճեցաւ Տէր ընդ Սիոնի, և ընտրեաց բնակել 'ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. 'ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա։

Զայրիս սորա օրհնելով օրհնեցից, և զաղքատս սորա լցուցից հացիւ։

Քահանայից սորա զգեցուցից զփրկութիւն, և սուրբք սորա ցնծալով ցնծասցեն։

Անդ ծագեցից զեղջիւր Դաւթի, պատրաստ արարից ճրագ օծելոյ իմոյ։

Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, այլ 'ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Եւ քարոզեսցէ սարկաւագն.

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ 'ի վերայ մեր։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա։

Եւ ասասցէ երգասացն

Տէր ողորմեա՛ ։

Եւ քահանայն ասասցէ զաղօթս ։

Որ զգեցեալ ես զլոյս որպէս զհանդերձ Տէր մեր Յիսուս Քրիստոս. անճառելի խոնարհութեամբ 'ի յերկրի երևեցար, և ընդ մարդկան շրջեցար ։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի, և զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ ։ Տէր ամենակալ որ պարգևեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ, արժանի արա և զիս 'ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո, որ համարձակիմ և մերձենամ 'ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քոց ։ Որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որ են հանդերձք պղծութեան, և զարդարեցայց լուսով քով ։ Ընկեա՛ յինէն զչարիս իմ, և թօթափեա՛ զյանցանս իմ. որպէս զի արժանի եղէց հանդերձելոյ լուսոյ առ 'ի քէն ։ Շնորհեա՛ ինձ քահանայական փառօք մտանել 'ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ' որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո ։ Զի և ես պատրաստ գտայց երկնաւոր առագաստին ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զքեզ Քրիստոս' որ բարձեր զմեղս ամենեցուն. զի դու ես սրբութիւն անձանց մերոց ։ Եւ քեզ բարերարիդ Աստուծոյ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

Եւ մատուցեալ սարկաւագունքն զգեցուցեն նմա զհանդերձսն սաղմոսելով ։

Եւ դնէ յառաջ զխոյրն 'ի գլուխն, և ասասցէ.

Դի՛ր, Տէր, սաղաւարտ փրկութեան 'ի գլուխ իմ, պատերազմել ընդ զօրութիւնս թշնամւոյն ։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

Շապիկն ։

Զգեցո՛ ինձ, Տէր, հանդերձ փրկութեան, և պատմուճան ուրախութեան, և շուրջ պատեա՛ զզգեստու փրկութեան ։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Գօտւոյն ։

Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ ըզմէջս սրտի իմոյ և մտացս, և շիջուսցէ 'ի սոցանէ զխորհուրդս աղտեղիս ։ Եւ զօրութիւն շնորհաց քոց յամենայն ժամ բնակեսցէ 'ի սոսա ։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Բազպանին ։

Տո՛ւր, Տէր, զօրութիւն ձեռացն իմոց, և լուա՛ զամենայն աղտեղութիւնս իմ, որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ ։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Ուրարին ։

Զգեցո՛, Տէր, պարանոցի իմոյ զարդարութիւն, և սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց ։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Նափորտին, որ է շուրջառն ։

Տէր, ողորմութեամբ քով զգեցո՛ ինձ ըզգեստ պայծառ, և պարսպեա՛ ընդդէմ ներգործութեան չարին, զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ ։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Յետ զգեստաւորելոյ սրբազան զգեստուցն' ասէ.

Ցնծասցէ անձն իմ 'ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան ։ Իբրև փեսայի եդ ինձ պսակ, և որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս ։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

# ԺԱՄԱՄՈՒՏՔ

*Ըստ կարգի աւուրց պահոց, տօնից տէրունականաց, և ամենայն սրբոց.*

## ՊԱՀՈՑ

Որ 'ի Հօրէ առաքեցար փրկիչ՝ և մարմնացար 'ի սուրբ կուսէն. որ վասն մեր 'ի յերկնից իջեր՝ և լուսաւորեցեր զանեղծս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես Թագաւոր. զխաղաղութիւն և զողորմութիւն. որ յամենայնի ես դու կարող՝ մարդասէր.

## ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ ԵՒ ՈՒՐԲԱԹՈՒ

Որ ըստ ամենայն միտս անցանես. զխաղաղութիւն քո Աստուած՝ տուր մեզ հանապազ՝ զքեզ աղաչեմք.

## ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

Ի տաճարի սրբոց, և յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա և աղօթիւք զկենդանութիւնս մեր խաղաղացո՛ Աստուած, որպէս մարդասէր.

## ՃԳՆԱՒՈՐԱՑ

Ճգնաւորք Քրիստոսի, որք տանջանաց անօրինացն համբերեցիք, և զմոլութիւն կռոցն խափանեցիք. պսակաւորեալք ընդ հրեշտակս 'ի յերկինս. որք ունիք զհամարձակութիւն 'ի Քրիստոսէ, բարեխօսեցէք կեցուցանել զանձինս մեր. զձեզ աղաչեմք.

## ԿԻՐԱԿԷԻ

Միածին որդի և բանդ Աստուած, և անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ 'ի սրբուհւոյ Աստուածածնէն և 'ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած. մահուամբդ զմահ կոխեցեր. մինն 'ի սրբոյ երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն. կեցո՛ զմեզ.

## ՍՏԵՓԱՆՈՍԻ

Ցնծա՛ այսօր՝ ցնծա՛ և զուարճացիր կաթուղիկէ սուրբ՝ յիշատակաւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային Քրիստոսի՝ վկայեցելոյ Հօր. որ աղօթիւք բանայր զերկինս, զոր փակեաց Ադամ. և հրեշտակակերպ տեսլեամբ տեսանէր զկերպարանն Հօր 'ի կերպի Ադամայ նստեալ յաթոռ փառաց. որ զբաղմութիւն քարանցն որպէս զծաղիկս հաւաքելով բոլորէր պսակս փոխանակ փշոցն և եղեգանն. Եւ զմարտիրոսական արիւնն խառնէր ընդ փրկական արեանն Քրիստոսի հոսեցելոյն 'ի կողէն. վասն որոյ գերազանցեալ 'ի փառս առաւել քան զամենայն սուրբս՝ հայցեա՛ և մեզ 'ի վերնառուղէն զպարգևս կենաց անփոխանակ՝ և զմեծ զողորմութիւն.

## ՍՏԵՓԱՆՈՍԻ

Յորոյմայնէ ընտրեալ՝ սուրբ Ստեփաննոս, յորոյմայնէ ընտրեալ՝ սուրբ Ստեփաննոս. վկայ ճշմարիտ առաքելական քարոզութեանցն. որ 'ի վերայ անօրէն քարաձիգացն աղօթէիր առ Քրիստոս Աստուած՝ մի համարիր սոցա զայս 'ի մեղս. 'ի ձեռն սորին բարեխօսութեանն յորդորեա՛ մեզ զմեծ քո զողորմութիւն.

ԾՆՆԴԵԱՆ

Աստուածածին անհարսնացեալ, զբանն անսկիզբն յղացար, և զԱստուածն անփոփոխելին ծնար. զանպարագրելին 'ի գիրկս քո բարձեր, նմա անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց։

ԾՆՆԴԵԱՆ

Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց, քանզի ուր քերովբէքն բազմաչեայք, և աթոռք հրանիւթք և վեցթևեան սերովբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնաբար յանապականութեան 'ի յարգանդի քում՝ որպէս աղախին զՏէր, և ծնար որպէս մայր զԱստուածն բոլորից զմարմնացեալն առ 'ի քէն՝ զանճառ զբանն, 'ի փրկութիւն աշխարհի և կեանք անձանց մերոց։

ԾՆՆԴԵԱՆ

Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին. բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ, և սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զամենայն գոյութեանց զստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս. մարմնացելոյն առ 'ի քէն բարեխօսեա՛ կեցուցանել զանձինս մեր։

ՍԻՄԷՈՎՆԻ

Տերունին այսօր Սիմէոնի՝ Հոգւովն գայր 'ի տաճարն, երևելով քերովբէիցն վեհագոյն. որոյ թևոցն սաւառնեալ ոչ իշխէին նայել 'ի յահեղ փառացն. սա 'ի գիրկս իւր բարձեալ համբուրէր համարձակապէս, և գգուէր որպէս զմանուկ. և աղերսելով հայցէր արձակել 'ի խաղաղութիւն։

ՏԵԱՌՆ ԸՆԴԱՌԱՋԻՆ

Անսկզբնական բանդ Աստուած 'ի վերջին աւուրս յանձն առեր լինել մարդ 'ի կուսէն, և արարիչդ յաւիտենից փակեցար ընդ ժամանակաւ, սուրբ Տէր սրբութեանց, և անկարօտ մաքրութեանց. եկիր 'ի տաճարն քառասնօրեայ զօրինացն կատարեցեր զարդարութիւն, զոր բարձեալ Սիմէոնի զանպարագրելիդ 'ի գիրկս իւր՝ հայցէր. որ արձակիչդ ես կապելոց՝ արձակեա՛ զիս 'ի խաղաղութիւն. վասն որոյ ընդ ծերունւոյն Սիմէոնի միագոչեմք առ քեզ Տէր. սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ Տէր զօրութեանց. լի են երկինք և երկիր փառօք քո 'ի փրկութիւն մեզ Քրիստոս Աստուած. փառք քեզ։

ԶՕՐԱԿԱՆԱՑ

Զօրական և վկայ ճշմարիտ՝ քաջ նահատակդ Քրիստոսի սուրբդ Թէոդորոս. որ փոխանակեցեր զմարմինդ ընդ հոգւոյդ քում փրկանս. և ոչ ածեր զմտաւ զպատուական Մաքսիմիանոսի թագաւորին. այլ վերին ազդեցութեամբն՝ զինելով զայրեցումն հոգւոյ նորա, վասն այնորիկ լուցեր զտաճար կռոց նորա։ Արդ՝ 'ի յաղթող պատերազմի ատենագոյս զոր նահատակութեան քոյ՝ բարեխօսեա՛ առ Տէր վասն անձանց մերոց։

ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

Գնալով փառաց քոց 'ի փառս՝ կաթուղիկէ եկեղեցի, զիմեալք 'ի Սեբաստիա վերին. ուր թագաւորեալքն յԱստուծոյ նահատակքն 'ի յամեի և 'ի քաղցրնեկց յերեսս բանսարկուին. քաջալերելով զմիմեանս, զի մի լուծեալ որ բազմնեալ անցաւորիս՝ պակասեսցի. այլ գոչելով առաքինաբար զինքն ընկերձեալ յանխուս աստուածայինն գանձուցն հողմեցի, աղաղակելով առ Քրիստոս, ընկալ զորդեգրութիւն մաղթիս մերոյ 'ի յոյս սիրողաց քոց. Տէր փառք քեզ։

ՂԱԶԱՐՈՒ

Զղազարու զննջումն որպէս կանխագէտ յառաջ ասէիր. զի և 'ի բեթանիա յառաջէիր. զի յարուցես զսիրելին քո. և քեզ գոչելով ասեմք՝ օրհնեալ որ գաս 'ի չարչարանս կամաւ հօր 'ի փրկութիւն անձանց մերոց:

ՂԱԶԱՐՈՒ

Յորժամ եկեալ կենարարն 'ի գերեզմանն Ղազարու՝ յորժամ եկեալ կենարարն 'ի գերեզմանն Ղազարու՝ աւետաւոր ձայնիւն աղաղակէր ասելով. Ղազարէ, արի եկ արտաքս: Իսկ մեռեալն 'ի գերեզմանէն յարեաւ. և նոյն ինքն զանմահութեան պարգևն ետ սիրելւոյն. և աստուածային ձայնիւն 'ի գերեզմանէն կոչեաց. վասն որոյ և մանկունք եբրայեցւոց՝ ասաւք օրհնէին զանմահ թագաւորութիւն քո. ովսաննա, օրհնեալ է գալուստ քո՝ օրհնութիւն 'ի բարձունս. օրհնեալ որ գալոց ես անուամբ Տեառն:

ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ

Ցնծա՛ երուսաղէմ, և զարդարեա՛ զառագաստ քո Սիոն. քանզի ահա թագաւոր քո Քրիստոս նստեալ 'ի յաւանակի նորոյ հեզութիւն ցուցանելով և գայ մտանէ յառագաստ քո Սիոն. և մեք աղաղակեմք՝ ովսաննա օրհնեալ եկեալ 'ի յանուն Տեառն, որ ունի ըղ-մեծ զօրութիւն:

ԶԱՏԿԻՆ

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, և յարութեամբ իւրով մեզ կեանս պարգևեաց. նմա փառք յաւիտեանս, ամէն:

ՅԻՆԱՆՑՆ

Ահաւոր և սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ. որ անսկիզբն 'ի Հօրէ անճառաբար մարմնացաւ 'ի կուսէն, խաչի համբերելով, և կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգևեաց շնորհս:

ՅԻՆԱՆՑՆ

Քանզի յարեաւ 'ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, և յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, և ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք, փառք սուրբ յարութեան քո Տէր:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Հիացան վերնական բազմութիւնքն տեսանելով զքեզ 'ի հրեղէն կառս բազմեալ՝ սարսեալ ասէին, ո՛վ է սա՝ որ գիմեալ գայ յեդոմայ, և եկեալ մտանէ փառօք 'ի փառս. Տէր փառք քեզ:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Որ յանսպառ յաթոռ նստիս՝ և յանմարմնոց վերօրհնիս, անհասանելի բանդ Աստուած, 'ի յերկրի երևեցար ծնմամբ մարդ՝ զանօրէնութեանն կատարեալ զխորհուրդ, խաչի և մահու համբերեցեր. և զհրաշալի ըղյարութիւնդ քո ցուցեր հզօր զօրութեամբ. այսօր համբարձար փառօք 'ի յերկինս, և զկուսածին զմարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր. զոր տեսեալ Եսայիաս՝ նախաձայնեալ ասէր, ո՛վ է սա՝ որ գիմեալ գայ յերկրէ. հիացեալ պետութեանց երկնից՝ գոչէին առ միմեանս. համբարձէք իշխանք ըղդրունս ձեր 'ի վեր, և մտցէ թագաւոր փառաց: Այլ որ յամենայնի կարօղդ ես և հզօր, շնորհեա՛ և մեզ հանդիպիլ քեզ ամպովք 'ի միւսանգամ քո գալստեանդ, որ միայնդ ես մարդասէր:

### ՀՈԳՒՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ

Աստուած զքեզ խոստովանիմք զսուրբ Հոգիդ՝ և երկիրպագանեմք. որ ես պատճառ կենդանութեան եղելոցս՝ և խաղաղարար աշխարհի. որ զաղխութիւն առաքելական բազում գիտութեամբ լցեր, և 'ի հրեղէն լեզուս բաժանեալ անճառելեաց ցուցեր նոցա. աղաղակեմք Տէր, խնայեա և կեցո զմեզ։

### ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Այսօր 'ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն լուսաւորելով զնոսա. և այժմ աղաչեմք զքեզ սուրբ Աստուած՝ որ ես պատճառ կենդանութեան եղելոցս և խաղաղարար աշխարհի, խնայեա և կեցո զմեզ։

### ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Վասն որոյ և մեք զՀոգին սուրբ ընդ Հօր միաւորեալ, և ընդ Որդւոյ միաբանեալ խոստովանիմք. և հայցեմք 'ի վերնատունէդ մեզ զհոգեւորական զխաղաղութիւնդ. Տէր փառք քեզ։

### ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ

Որք ծագեցան մեզ յարեւմտից որպէս զարեգակն. և լուսաւորեցին համանգամայն զաշխարհս հայաստանեայց, փարատեցին զը-խաւարն անգիտութեան կռապաշտութեան. և լուսաւորեցին զամենայն հոգի հաւատով աստուածգիտութեան. սոցա բարեխօսութեամբն Քրիստոս Աստուած, պարգեւեա աշխարհի քում զխաղաղութիւն. և անձանց մերոց զմեղաց զթողութիւն որպէս մարդասէր Տէր։

### ԳԱՅԻԱՆԵԱՆՑ

Զայգնական զձեր զհանդէս զուարճացեալ տօնէ եկեղեցի սուրբ. քանզի սրբութեամբ ստացայք զկուսութիւն, և 'ի մարմնի զանմարմնոցն ցուցիք զհանդէս։

### ԿՈՒՍԱՆԱՑ

Հարսնացեալք Քրիստոսի երկնաւոր փեսային, դստերք վերին Սիոնի. խնդրեցէք 'ի Քրիստոսէ զհաշտութիւն և զմեծ ողորմութիւն։

### ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻՆ

Զյառաջընթացութիւն քո և զկարապետութիւն Աստուծոյ բանին խափանել կարծելով, որ 'ի ձեռն կնոջն զնախատեղծն 'ի դրախտէն արտաքս ընկէց. նոյն այժմ զՀերովդիադա անօրէնութեամբ բորբոքեալ. և բազմելոյն Հերովդիայ զկաքաւս սոյց աղջկանն հաճոյացոյց. զի զքոյդ հատցէ զգլուխ. որ զամենեսեան ձեռնադրեցեր զգլուխն ըն-Քրիստոս։ Այլ դու, որ յանապատէ բարբառոյ ձայն, զօրեա՛ որում ձեռնադրեցեր. պարգեւել զխաղաղութիւն և զմեծ ողորմութիւն։

### ՄԱՐԳԱՐԷԻՑ

Տէր՝ որ հիմնեցուցեր զեկեղեցի քո 'ի վերայ վիմին հաւատոյ, և կարգեցեր 'ի սմա առաքեալս՝ և մարգարէս. հովիւս և վարդապետս առ 'ի հաստատութիւն սրբոց, և ճըշմարտութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր. 'ի խաղաղութեան զսա պահեա Աստուած որպէս մարդասէր։

### ԱՌԱՔԵԼՈՑ

Առաքեալք և վկայք Քրիստոսի Աստուծոյ, ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միաբանական սուրբ եղբայրութեանն յորդորեցին երգել զփառս 'ի յաւիտեանս. ամէն։

### ՀԱՅՐԱՊԵՏԱՑ

Զհայրապետականն զարգարեցեր զաթոռ 'ի յերկրի· առաքելական առեր զգաւառ յերկնաւոր ծառայ Քրիստոսի մեծ երանելիդ 'ի հարս սուրբ հայրապետ· քանզի քոյ վարդապետութեանց սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուղղափառութեան պտուղ հատուցանելով, և հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով· վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց։

### ԵԿԵՂԵՑՒՈՅ

Զխաղաղութիւն շնորհեա եկեղեցւոյ քում սրբոյ· զխաղաղութիւն և զանշարժութիւն 'ի թշնամեաց պահպանեա· և հաստատեա 'ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի· զքեզ խոստովանիմք Տէր և Աստուած՝ կեցո զմեզ։

### ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

Երևի Տէր այսօր աշակերտացն 'ի Թաբորական լերինն. և աշակերտացն զարհուրեալ աղաղակէին ասելով· արասցուք երիս տաղաւարս, մի Տեառն, և մի Մովսէսի, և մի Եղիայի։ Եւ մեք բանաւոր հօտքս երգեմք ընդ քո ճշմարիտ վկայիցդ· առաքեա 'ի մեզ զլոյս քո շնորհացդ 'ի քոյ միասնական զաւակաց և կեցո։

### ԽԱՉԻ

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով և խնդրեմք ըզթողութիւն յանցանաց մերոց· քանզի առաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան։ Եւ այժմ վասն սրբոյ աստուածային քոյ նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի։

### ՈՐԴՒՈՑՆ ՈՐՈՏՄԱՆ

Այսօր ահաւոր ձայնք որոտման հնչեցին յերկնից 'ի յերկիր կոչելով յորդեգրութիւն զձեզ որդիք Սիոնի· հաստատութիւն հաւատոյ, և պարծանք եկեղեցւոյ· որք ցօղով արեան ձերոյ՝ մաքրեցիք զոխեղբերս յանօրէն կռապաշտութեանց։ Արդ՝ հայցեցէք 'ի Քրիստոսէ զքաւութիւն տօնողացս անուան ձերոյ· մաղթանօք սոցա Տէր խնայեա 'ի փրկեալ քո ժողովուրդս, որ միայն ես մարդասէր։

### ՀՐԵՇՏԱԿԱՑ

Զոր օրհնեն անլռելի ձայնիւ իմանալի զօրութիւնք, երկնաւոր նախապետութիւնք՝ հրեշտակք՝ և հրեշտակապետք, աթոռք՝ և տէրութիւնք, իշխանութիւնք՝ և պետութիւնք, սերովբէք՝ և քերովբէք զամենասուրբ զերրորդութիւնն, և զմի աստուածութիւն։

### ՀՐԵՇՏԱԿԱՑ

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քահանայապետութիւն ցնծայ հրաշափառապէս՝ զերկնաւոր քահանայապետութեանցն կատարելով զտօնախմբութեան տօնս, անմարմնական զգաստուց հոգեղինացդ՝ մարմնականքս և հողեղէնքս, մի սուրբ Գաբրիէլ և Միքայէլ մեծք, հրեշտակապետք բարձրեալն, որք կայք առաջի աթոռոյ աստուածութեանն· անդադար բարեխօս լերուք վասն մեր առ Տէր, վերաբերել զամենեսեան ընդ ձեզ յերկնից արքայութիւնն, և միաձայն բարբառով երգել զփառս։

### ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

Գրիգոր սուրբ քահանայապետ՝ որ ըզհաւատս ուսուցեր, և զբանակս զիւացն հալածեցեր· մարդկան ուսուցեր քարոզել զերրորդութիւնն, պսակեցար յարքայութեանն· արդ՝ բարեխօս լեր առ Տէր վասն մեր։

## ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ

Որ 'ի վերայ քերովբէիցն հանգչիս, և 'ի զօրացն հրեղինաց օրհնաբանիս, էջեր 'ի Բաբելոն և փրկեցեր զերիս մանկունսն 'ի հրոյն բռնութենէ. որք աղաղակելով գոչէին երգ նոր, ամենայն գործք օրհնեցէք և բարձր արարէք: Թագաւոր փառաց Քրիստոս և արարիչ բոլորից. որ մարդասիրապէս գթացար 'ի սուրբ մանկունսն, փրկեցեր 'ի բորբոքեալ բոցոյն. որք անարգեցին զբռնութիւն Թագաւորին, և չերկուցին զզօրութիւն հրոյն. ընդ նոսին և մեք քեզ վերագոչեմք. փրկեա՛ զմեզ 'ի հրոյն յաւիտենից: Զի դու միայն ես բազմողորմ Տէր՝ քեզ փառք յաւիտեանս. ամէն:

## ԵՒ ՅԵՏ ԶԳԵՆԼՈՅ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԶԳԵՍՏՈՒՑՆ· ԵԿԵՍՑԵՆ ԱՌԱՋԻ ՍՐԲՈՅ ՍԵՂԱՆՈՅՆ

*Եւ քահանայն լուասցէ զձեռս ասելով Սաղմ. ԻԵ.*

Լուացից սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եղէց զսեղանով քո Տէր։

Սարկաւագն.

Դատ արա ինձ Տէր, զի. եւ այլն։

Տուն առ տուն զփոխն 'ի լման։

Քահանայն.

Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնին Տէր ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ։

Սարկաւագն.

Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր 'ի յերկինս, զի կամեսցի ողորմեսցի, եւ գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա։

Քահանայն.

Ընկալ Տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին անարատ ծնողի միածնի Որդւոյ քոյ, եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց, (եւ որոց այսօր է յիշատակ.) լուր մեզ Տէր եւ ողորմեա, ներեա, քաւեա, եւ թող զմեղս մեր։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ՝ եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ ապա խոնարհեալ պատարագիչ քահանայն առաջի այլոց քահանայիցն առընթեր կացելոցն՝ ասէ.

Խոստովանիմ առաջի Աստուծոյ, եւ սրբուհւոյ Աստուածածնին, եւ առաջի ամենայն սրբոց, եւ առաջի ձեր Հարք եւ եղբարք, զամենայն մեղս զոր գործեալ եմ։ Քանզի մեղայ խորհրդով, բանիւ, եւ գործով, եւ ամենայն մեղօք, զոր գործեն մարդիկ, մեղայ, մեղայ։ Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն։

Պատասխանեն որք մերձն են.

Ողորմեսցի քեզ Աստուած հզօրն, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն, եւ այժմուս, եւ յառաջիկայէն փրկեսցէ զքեզ, եւ հաստատեսցէ յամենայն գործս բարիս, եւ հանգուսցէ զքեզ 'ի հանդերձեալ կեանս. ամէն։

Պատասխանեսցէ եւ ինքն.

Ազատեսցէ եւ զձեզ մարդասէրն Աստուած, եւ թողցէ զամենայն յանցանս ձեր։ Տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբարիս։ Ուղղեսցէ եւ զառաջիկայ կեանս ձեր շնորհօք սուրբ Հոգւոյն, հզօրն եւ ողորմածն, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն։

Դպիրքն.

Յիշեսջիր զմեզ առաջի անմահ գառին Աստուծոյ։

Քահանայն.

Յիշեալ լիցի սուրբ անմահ գառին Աստուծոյ։

Դպիրքն։ Առաջնոյ ՂԺ փոխ։

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. և այլն։

Սարկաւագն քարոզէ.

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Քահանայն.

Ի մէջ տաճարիս և սրբոյ աստուածընկալ և պայծառացեալ սուրբ սեղանոյս, խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք, զսուրբ զհրաշալի և զյաղթող զտէրութիւնդ քո փառաւորեմք։ Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Մտից սրբոյ սեղանոյ Աստուծոյ առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Սարկաւագն. Դատ արա ինձ, Աստուած, և իրաւ արա ինձ 'ի դատաստանի իմում։

Քահանայն. Յազգէ որ ոչ է սուրբ, 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս։

Սարկաւագն. Դու Աստուած հզօրիչ իմ ես, ընդէր մոռացար զիս. ընդէր տրտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ։

Քահանայն. Առաքեա, Տէր, զլոյս քո և զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ, և հանցեն զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո։

Սարկաւագն. Մտից սրբոյ սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Քահանայն. Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած, Աստուած իմ։

Սարկաւագն. Արդ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեսցի նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Քահանայն. Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Սարկաւագն. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Օրհնեսցուք զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ 'ի տեղւոջ փառաբանութեան, և երգել զերգս հոգևորս. ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Քահանայն.

Ի յարկի սրբութեան, և 'ի տեղւոջ փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս, և մարդկան քաւարանիս. սրբոյ աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք, զսուրբ զհրաշալի և զյաղթող (զյարութիւնդ) քո փառաւորեմք։ Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Իսկ եթէ եպիսկոպոս լիցի խորհրդածուն, ապա զսուրբ կոնքեանն, և անդ 'ի վերայ լանջացն և զպատուական եմիփորոնն, և եկեսցեն առաջնորդ ընծայարան սեղանոյն, լուացեալ զձեռս։ Եւ մատուցեալ առաջի սեղանոյն, լուռ և անմռունչ ասասցէ զաղօթս առ սուրբ Հոգին անօրինակ գործոյն։

Ամենակալ բարերար մարդասէր Աստուած բոլորից, յօրինող երևութից և աներևութից, փրկող և հաստատող, խնամող և խաղաղարար Հօր Հզօր Հոգի. հայցեմք բազկատարած մաղթանօք զգուշանք հեծութեան՝ յանդիման եղեալ քեզ աշխատողք։ Մատչիմք մեծաւ դողութեամբ, սարսափ երկիւղիւ, մատուցանել նախ զբանականս զայս պատարագ՝ քում անճառելի զօրութեանդ, իբր աթոռակցի փառակցի և արարչակցի՝ Հայրենի անկարօտ պատուոյդ, և քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց Հօրդ Եմմանուէլի՝ զքեզ առաքչի, փրկչի և կենդանատուի, և արարչի ամենայնի։ Ի ձեռն քոյ ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միաւորական աստուածութեանդ. յորոց մի և դու ճանաչիս անճառ։ Քեւ, և 'ի ձեռն քո առաջինքն նահապետական ուխտին չառաւելքք՝ սեռանօքք անտանելիքն, զանցեալն և զգալոյն անատուերական բարբառով բանն վերապատմեցին. Հոգի Աստուծոյ քարոզեալ զքեզ Մովսէսի, որ 'ի գնալն քո 'ի վերայ ջրոյն՝ անապարագիր զօրութիւն, ահեղ շրջարկութեամբ աստուածականս, թևաւորական պաշտպանողական գթասիրեալ 'ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր։ Զոր կերպարան օրինակութեան՝ նախ քան զկատարելն զլոյծ մնացեալ վերջնում վարդապետիւ, յօրինեցեր կարող տիրապէս զբովանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից ամենայն էից՝ յանէից։ Քեւ առեղծանեն 'ի նորոգութիւն յարութեան ամենայն եղելոցս առ 'ի քէն, յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի, և որ առաջին երկրին կենդանեաց։ Քեզ հնազանդեցաւ մարմնովք կամացն որպէս Հօրն իւրում, ազգակիցն քո՝ էակիցն Հօր՝ անդրանիկն Որդի՝ մերոյս կերպիւ զքեզ աւետարանեաց ճշմարիտ Աստուած՝ հաւասար և համագոյ Հօր իւր հզօրի. և զաւ 'ի քեզ հայհոյութիւնն անթողլի քարոզեաց. և իբր զաստուածամարտսն զքո հեստեալսն՝ չարաբանական բերանս կարկեաց. և զիւրն չհորհեաց՝ արդարն և անարատն՝ զարիւն ամենայնի. որ վասն մեղաց մերոց մատնեցաւ. և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։ Նմա փառք 'ի ձեռն քո, և քեզ բարերարութիւն ընդ Հօր ամենակալի, յաւիտենից յաւիտեանս. ամէն։

Դարձեալ կրկնեսցի 'ի նոյն կարգ բանի, մինչև փառաւորութիւնն լուսոյ հրաշալեաց յայտնեսցի ազդելով աւետարանել վերստին զերկրին խաղաղութիւն։

Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ՝ զփառաւորեալ արարչութիւնդ՝ անեղդ և անսկզբդ՝ անժամանակ Հոգւոյդ գթածի. որ բարեխօսես վասն մեր յանմռունչ հեծութիւնս՝ առ ողորմած Հայր. որ զսուրբս պահես, և զմեղուցեալս մաքրես՝ և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրելոյ Հօր։ Արդ՝ ազատեա զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան. և մի շիջցին առ 'ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք՝ 'ի տեսականացս աչաց իմացից. վասն զի զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց։ Եւ քանզի մինչ յերկրորդութենէդ պատարագի, և

մխոց ընդունի՝ հանեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օ-թեւանս պատուականս ամենայն պատրաս-տութեամբ 'ի փոյթլումն ճաշակման երկնաւոր գանձուց, առանց պատժոց դատապարտու-թեան ընդունել զսա անմահացուցիչ մանա-նայս կենաց նորոյ փրկութեանն. Եւ հալեսցի 'ի հրոյս յայսմանէ գայթակղութիւնս մեր, որպէս մարգարէին կենդանախառըն կայծա-կամբն, 'ի ձեռն ունելեացն մատուցմանն. զի յամենայնի քոյդ քարոզեսցի գթութիւն, որ-պէս Որդւոյդ Աստուծոյ Հօր քաղցրութիւն. որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռնիկն յառաջնեցոյց յերկնային արքայութիւնն՝ արդարոյն երա-նութեան. Այո՛ այո՛ և ես մի եմ 'ի նոցանէ, և զիս ընկալ ընդ նոսին, իբր մարգասիրու-թեան կարօտեալ մեծի, ձեռնձօր քո ազդեալ, զարեամբ Քրիստոսի ասացեալ. Զի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո աստուա-ծութիւնդ, ընդ Հօր փառաւորեալ համապա-տուարար 'ի մի կամս, և 'ի մի իշխանութիւն զօրութեան.

Ի ձայն.

Զի քո է գթութիւն, և կարողութիւն, և մարդասիրութիւն, զօրութիւն, և փառք յա-ւիտեանս յաւիտենից. ամէն.

Ապա յարուցեալ եկեալ առ ընծայարան սեղանոյն, առ որ մատուցեալ Նախասարկաւագն զփիլոնն, զոր ա-ռեալ քահանայն դիցէ 'ի մաղզմայն, ասելով.

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-տոսի.

Եւ առեալ զգինին արկցէ խաչանման 'ի սկիհն. Նոյնպէս և ասկաւրն մի ճուր արկցէ, ասելով.

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէ-նութեան Տեառն Աստուծոյ, և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ ասասցէ զաղօթս 'ի ծածուկ. Յովհաննու Ոսկե-բերանի.

Աստուած Աստուած մեր, որ զերկնաւոր հացդ. զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զկերա-կուրն ամենայն աշխարհի առաքեցեր փրկիչ և կեցուցիչ և բարերար. օրհնել և սրբել զմեզ. Խնդրեմ զու Տէր օրհնեա և սրբեա զառաջադրութիւնս զայս. Ընկալ զսա յերկ-նային քո սեղանդ. Յիշեա որպէս բարերար և մարդասէր զմատուցօղս, և վասն որոց մա-տուցանի. Եւ զմեզ անդատապարտ պահեա 'ի քահանայագործութիւն աստուածային խոր-հրդոց քոց. Զի սուրբ և փառաւոր է ամե-նապատիւ մեծվայելչութիւն փառացդ Հօր, և Որդւոյ, և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Եւ պղջեսցէ ասելով.

Տէր թագաւորեաց, զվայելչութիւն. և այլն.

Եւ արկցէ խունկ ասելով.

Խունկ մատուցանեմ առաջի քո Քրիս-տոս Աստուած բուրումն հոգևորական. Ըն-կալ 'ի սուրբ, յերկնային և յիմանալի քո մատուցարանդ 'ի հոտ անուշից. Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս և զպարգևս Հոգւոյդ սրբոյ. Եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Եւ երեքս երկրպագեալ քահանայն, համբուրեսցէ ըզ-սեղանն.

Եւ սարկաւագն կոչեսցէ 'ի մէջ տաճարին. ձայնեսցէ ասելով.

Օրհնեա Տէր.

Եւ քահանայն 'ի ձայն ասասցէ.

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Եւ սկսցին այլ եկեղեցականքն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն։

Եւ յաւարտման երգոյն քարոզէ սարկաւագն.

Եւ ևս խաղաղութեան զՏէր։
Ժողովուրդն. Տէր ողորմեա։
Սարկաւագն. Կեցո՛ և ողորմեա՛։
Ժողովուրդն. Կեցո՛ Տէր։
Սարկաւագն. Օրհնեա՛ Տէր։

Եւ քահանայն ասասցէ գաղտ.

Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է, և փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է, և գթութիւնդ անբաւ։ Դու ըստ առատ մարդասիրութեան քում՝, նայեա 'ի ժողովուրդս քո, և 'ի տաճարս յայս սուրբ։ Եւ արա ընդ մեզ, և ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո և զգթութիւն։ Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Քահանայն ասասցէ խորհրդաբար։

Տէր Աստուած մեր, կեցո զժողովուրդս քո և օրհնեա զժառանգութիւնս քո, զլրումն եկեղեցւոյ քոյ պահեա, սրբեա զսոսա, որք ողջանեցին սիրով զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով, և մի թողուր զյուսացեալսս 'ի քեզ։ Զի քո է կարողութիւն, և զօրութիւն, և փառք, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն։

Որ զհասարակաց զայս, և միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգևել խոստացար։ Դու և այժմ զծառայից քոց խնդրուածս՝ առ 'ի յօգուտն կատարեա, շնորհելով յայսմ՝ յաւիտենիս զգիտութիւն քումդ ճշմարտութեան, և 'ի հանդերձեալն զկեանն յաւիտենականն պարգևելով։ Զի բարերար և մարդասէր ես Աստուած. և քեզ վայելէ փառք, իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ ապա ասասցի շարական ըստ պատշաճի աւուրն։
Եւ 'ի մէջ տանն երթիցեն առաջի բեմին, և երկրպագեսցեն երիցս։

Եւ քահանայն ասասցէ գաղտ.

Տէր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս, և զզօրութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց 'ի սպասաւորութիւն փառաց քոց։ Արա՛ այժմ ընդ մուտս մեր մտանել և սրբոց հրեշտակաց, և լինել պաշտօնակից մեզ և փառաբանակից քումդ բարերարութեան։

Ի ձայն.

Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Եւ համբուրեսցեն զսեղանն, և յաւարտման շարականին՝ գոչեսցէ սարկաւագն.

Պռօսխումէ։

Եւ ասասցեն զերեքսրբեանն ձայնիւ.

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, ողորմեա մեզ։

Եւ քահանայն զգոյշ ածն ասասցէ ՚ի ծածուկ զաղօթս.

Աստուած սուրբ, որ ՚ի սուրբս հանգուցեալ ես, և երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ, և քերովբէք փառաբանեն, և ամենայն երկնային զօրութիւնք քեզ երկիրպագանեն. Որ ՚ի չգոյէ ՚ի գոյ ածեր զամենայն արարածս. Որ արարեր զմարդն ըստ պատկերի քում, և նմանութեան, և ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր, և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգօնութիւն. և ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եդեր ՚ի վերայ նորա զապաշխարութիւն փրկութեան. Որ արժանի արարեր զմեզ զխոնարհ և զանարժան ծառայսս քո ՚ի ժամու յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, և զպարտաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ. Դու Տէր ընկալ ՚ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս, և պահեա զմեզ քոյին քաղցրութեամբդ. Թող մեզ զամենայն յանցանս մեր զկամաւ և զակամայ. Սրբեա զհոգի զմիտս և զմարմինս մեր. և շնորհեա ՚ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց. բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և ամենայն սրբոց քոց, որք յաւիտենից քեզ բարեհաճեցան. Զի սուրբ ես Տէր Աստուած մեր, և քեզ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Եւ սարկաւագն քարոզեսցէ.

Եւ ևս խաղաղութեան զՏէր.

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի.

Սարկաւագն ձայնեսցէ.

Օրհնեա Տէր.

Եւ քահանայն բազկատարած ասասցէ ՚ի ծածուկ զաղօթս.

Տէր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս, և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում. Զգթութիւն քո առաքեա ՚ի վերայ մեր և ամենայն ժողովրդեանս, որք ակն ունին առ ՚ի քէն առատ ողորմութեանդ.

Ի ձայն.

Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով. և քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Եւ քահանայն նստցի յաթոռանն. Եւ սկսցին ասել սաղմոս. Կցորդ, ըստ խորհրդոյ աւուրն. Եւ ընթերցցին զգիրս մարգարէականս, և առաքելականս. Եւ զկնի ալէլու. ըստ յաւելման ընթերցուածոյն. Եւ յաւարտմանն՝ սարկաւագն բարձր ձայնիւ գոչեսցէ.

Օրթի.

Քահանայն գոչեսցէ ՚ի խորանէն. և խաչակնքեսցէ ՚ի վերայ ժողովրդեանն. և ասասցէ.

Խաղաղութիւն ✝ ընդ ամենեսեան.

Ժողովուրդն. Եւ ընդ հոգւոյդ քում.

Սարկաւագն. Երկիւղածութեամբ լուարուք.

Սարկաւագն.

Սրբոյ աւետարանիս ըստ (Մատթէոսի).

Ժողովուրդն. Փառք քեզ Տէր Աստուած մեր.

Սարկաւագն. Պռօսխումէ.

Ժողովուրդն. Ասէ օրթէօս.

Եւ սարկաւագն ընթերցցի զաւետարանն. և յաւարտն ասասցեն ամենեքեան.

Փառք քեզ Տէր Աստուած մեր.

Եւ ասասցէ զհաւատամքն.

Հաւատամք 'ի մի Աստուած Հայրն ամենակալ. յարարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից: Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին նախ քան զամենայն յաւիտեանս: Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ՝ և ոչ արարած: Նոյն ինքն համագոյակից Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի՝ երևելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեանն՝ իջեալ 'ի յերկնից. մարմնացաւ՝ մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն սրբով: Որով էառ մարմին, հոգի, միտս, և զամենայն որ ինչ է 'ի մարդ. ճշմարտապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝ դատել զկենդանիս և զմեռեալս: Որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան: Հաւատամք և 'ի սուրբ Հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն, որ 'ի Հօրէ և յՈրդւոյ բղխի: Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալսն, և բնակեցաւ 'ի սուրբսն: Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի: Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն՝ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց: Ի դատաստանն յաւիտենից, հոգւոց և մարմնոց: Յարքայութիւնն երկնից, և 'ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ Հոգին: կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ, և կամ զսուրբ Հոգին: Եւ թէ փոփոխելի են՝ կամ այլայլելի, զայնպիսին նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի:

Լուսաւորչին.

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն, և մի աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Ժողովուրդն. Ամէն:

Եւ սարկաւագն քարոզեսցէ 'ի ձայն.

Եւ ևս խաղաղութեան զՏէր:

Ժողովուրդն. Տէր ողորմեա:

Սարկաւագն. Եւ ևս հաւատով:

Մինչ նոքա երգեն, քահանայն զաղօթս ասէ 'ի ծածուկ.

Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծ ես ողորմութեամբ, և առատ պարգևօք բարերարութեան քոյ: Որ դու քոյին կամաւ 'ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց, խաչի, և մահու՝ յաղագս մեղաց մերոց. և պարգևեցեր առատապէս զպարգևս Հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցդ: Հաղորդս արա և զմեզ Տէր, աղաչեմք զքեզ՝ աստուածային պարգևացդ, թողութեան մեղաց, և ընդունելութեան Հոգւոյդ սրբոյ:

Ի ձայն.

Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

խաղաղութիւն ✠ ամենեցուն։

Խաղաղութեամբ քով Քրիստոս փրկիչ մեր, որ ՚ի վեր ես քան զամենայն միտս և զբանս՝ ամփոփեա զմեզ, և անխռովս պահեա յամենայն չարէ։ Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով և ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն։ Զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս։

Ժողովուրդն. Ամէն։
Սարկաւագն. Օրհնեա Տէր։

Քահանայն.

Տէր Աստուած օրհնեսցէ ✠ զամենեսեանս։

Սարկաւագն. Սաղմոս ասացէք։

Սրբասացութիւն ըստ խորհրդեան։
Յետ որոյ սարկաւագն ձայնեսցէ.

Մի ոք յերեխայից, մի ոք։

Դպիրքն եղանակեսցեն.

Մարմին տէրունական, և արիւն։

Եւ ապա եղանակեսցեն.

Որք ըստ քերովբէին։

Եւ ՚ի սարկաւագացն վերաբերցի պատարագն հացն, և օրհնութեամբ բաժակն ՚ի սուրբ սեղանն։

Եւ մինչ նոքա երգեն, քահանայն խոնարհեալ առաջի սրբոյ սեղանոյն, և խորհրդաբար աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Ոչ ոք արժանի է յկապեալոցս մարմնաւոր ախտիւք և ցանկութեամբ մատչել ՚ի սեղան քո, կամ սպասաւորել արքայական փառացդ քոց. քանզի պաշտել զքեզ՝ մեծ և ահաւոր երկնաւոր զօրութեանցդ իսկ է։ Սակայն վասն անչափ բարերարութեան քոյ՝ անպատարագրելի բանդ. հօր եղեր մարդ, և քահանայապետ մեր երևեցար։ Եւ իբր տէր ամենեցուն՝ այսմ սպասաւորութեան և անարիւն զենման զքահանայութիւն աւանդեցեր մեզ։ Վասն զի դու ես Տէր Աստուած մեր, որ տիրես երկնաւորաց և երկրաւորաց։ Որ ՚ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս՝ սերովբէից Տէր, և թագաւոր Իսրայելի։ Որ միայն սուրբ ես, և ՚ի սուրբս հանգուցեալ։ Աղաչեմ զքեզ միայն բարերար, նայեաց յիս ՚ի մեղուցեալ և յանպիտան ծառայս քո, և սրբեա զհոգի և զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին։ Եւ բաւականացո զիս զօրութեամբ սուրբ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ զքահանայական շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս, և քահանայագործել զքո անարատ մարմինդ և զպատուական արիւնդ։ Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ մաղթեմ, մի դարձուցաներ զերեսս քո յինէն, և մի մերժեր զիս ՚ի ծառայից քոց։ Այլ արժանի արա մատուցանել քեզ զընծայս զայս յինէն ՚ի մեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ։ Վասն զի դու ես՝ որ մատուցանես, և մատչիս, և ընդունիս, և առս Քրիստոս Աստուած մեր։ Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկզբն Հօրդ, և ամենասուրբ և բարերար Հոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ ընծայքն վերաբերեսցին ՚ի սեղանն սուրբ. և քահանայն խնկարկեսցէ ՚ի վերայ սեղանոյն. և լուասցէ զձեռս առեալ.

Լուացից սրբութեամբ զձեռս։

Եւ քարոզեսցէ սարկաւագն.

Եւ ևս խաղաղութեան զՏէր։

Ժողովուրդն. Տէր ողորմեա։
Սարկաւագն. Եւ ևս հաւատով։

Քահանայն՝ թէ առաջեւ կայցէ 'ի խորհրդեանն, մինչ նա շրջեցն ասէ, համբուրեսցէ զսեղանն, և խաչակնքեալ ✠ զժողովուրդն, բարձրաձայն կայցէ առաջի սեղանոյն. և ասասցէ 'ի ձայն քաղցու:

Տէր Աստուած զօրութեանց, և արարիչ ամենայն լինելութեանց, որ յանէութենէ բղխեալս 'ի գոյացութիւն ամենայն գոյացուցեր: Որ և զմեր հողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրաբար՝ այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոց կարգեցեր սպասաւորս: Դու Տէր՝ որում պատարագեմք զպատարագս, ընկալ առ 'ի մէնջ զառաջադրութիւնս զայս: Եւ աւարտեա զսա 'ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քո: Դեղ թողութեան մեղաց պարգևեա ճաշակողացս զհացս զայս և զբաժակս:

Ի ձայն.

Շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր՝ միանգամայն և Հոգւոյդ սրբոյ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Խաղաղութիւն ✠ ամենեցուն:

Ժողովուրդն. Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:
Սարկաւագն. Ողջոյն տուք միմեանց:

Եւ համբուրեսցեն զսեղանն, և զմիմեանս:

Ձայնեսցէ սարկաւագն.

Ահիւ կացցուք, երկիւղիւ:

Դպիրք. Առ քեզ Աստուած:
Սարկաւագն. Պատարագ Քրիստոս մատչի:
Դպիրքն. Ողորմութիւն և խա:

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ✠ 'ի վերայ ժողովրդեանն, և ասասցէ.

Շնորհք սէր և աստուածային սրբարար զօրութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ եղիցի ընդ. ձեզ՝ ընդ ամենեսեան:

Ժողովուրդն. Եւ ընդ հոգւոյդ:
Սարկաւագն. Ի վեր ընծայեցուցէք:
Դպիրքն. Ունիմք առ քեզ Տէր:
Սարկաւագն. Եւ գոհացարուք:
Դպիրքն. Արժան և իրաւ:

Քահանայն մեղմաձայն աղօթեսցէ 'ի ծածուկ.

Արժան է ստուգապէս և իրաւ ամենայն յորդոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել զքեզ Հայր ամենակալ: Որ քոյին անզննելի և արարչական բանիւդ. զանիծիցն բարձեր զկրճիմն: Որ ժողովուրդ քերեան ունեալ զեկեղեցի սեպհականեաց զհաւատացեալս 'ի քեզ: Եւ զննելի բնութեամբ ըստ 'ի կուսէն մանկութեան հաճեցաւ բնակել 'ի մեզ: Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ զերկիրս երկին արար: Վասն զի որում ոչ հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք 'ի փայլակնացայտ, և յանմատոյց լուսոյ աստուածութեանդ, եղեալ այդպիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան, շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս:

Ի ձայն.

Եւ ընդ սերովբէն, և ընդ քերովբէն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին, և ասել.

Սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր:





*Քահանայն բազկատարած աղօթեսցէ 'ի ծածուկ, մինչ նոքա երգեսցեն.*

Սուրբ, սուրբ, սուրբ ես ճշմարտապէս և ամենասուրբ, և ո՞վ որ պանծասցի բովանդակել բանիւ զքո 'ի մեզ զանբաւ բարերարութեանց զեղմունս։ Որ և յառաջն իսկ 'ի նախնումն պահպանեալ ընդ մեղօք՝ զանազան եղանակօք խնամեալ սփոփեցեր՝ մարգարէիւք՝ օրինացն տրչութեամբ՝ քահանայութեամբ՝ և զուարակաց երինջոյն մատուցմամբ։ Իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիքն, ետուր մեզ զորդին քո միածին՝ զպարտապան և զպարտս, զընծայն և զօծեալ, զգառն և զերկնաւոր հաց, զքահանայապետ և զպատարագ։ Վասն զի նա է բաշխող. և նոյն ինքն բաշխի 'ի մէջ մերում միշտ անծախապէս։ Վասն զի եղեալ ճշմարտապէս և առանց ցնորից մարդ, և անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յաստուածածնէն և 'ի սուրբ կուսէն Մարիամայ։ Ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց. և յաշխարհակեցոյց և յառիթն փրկութեան մերոյ եկեալ կամաւ 'ի խաչն։

Առեալ զհացն 'ի սուրբ՝ յաստուածային՝ յանարատ և 'ի պատուական ձեռս իւր. Օրհնեաց, գոհացաւ, եբեկ՝ ետ իւրոց ընտրելոց՝ սուրբ և բազմեալ աշակերտացն՝ ասելով.

*Առէք կերէք.*

ԱՅՍ Է ՄԱՐՄԻՆ ԻՄ·

Որ վասն ձեր և բազմաց բաշխի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

*Նոյնպէս և զբաժակն առեալ.*

Օրհնեաց, գոհացաւ, էարբ՝ ետ իւրոց ընտրելոց՝ սուրբ՝ և բազմեալ աշակերտացն՝ ասելով.

*Արբէք 'ի սմանէ ամենեքեան.*

ԱՅՍ Է ԱՐԻՒՆ ԻՄ· ՆՈՐՈՅ ՈՒԽՏԻ· ՈՐ ՅԱՂԱԳՍ ՁԵՐ· ԵՒ ԲԱԶՄԱՑ ՀԵՂԱՆԻ Ի ՔԱՒՈՒԹԻՒՆ ԵՒ Ի ԹՈՂՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՑ·

Եւ զայն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար Որդին քո միածին։ Եւ իջեալ 'ի ստորին վայրս մահու՝ մարմնովն զոր 'ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ։ Եւ զնիգս դժոխոցն արարեալ հզօրապէս, զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ Աստուած, զԱստուածդ կենդանեաց և մեռելոց։

Եւ առեալ զբաժակս 'ի ձեռս ասասցէ 'ի ցած.

Եւ արդ. մեք, Տէր, ըստ այդմ հրամանատուութեան՝ յառաջ բերելով զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քո։ Յիշեմք զդորա՝ որ վասն մեր զփրկագործ չարչարանսն, զկենդանատու խաչելութիւնն, զերեքօրեայ զթաղումն, զերանելի յարութիւնն, զաստուածավայել համբարձումն, զնստելն ընդ աջմէ քո Հայր, զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք։

Եւ դիցէ զընծայսն 'ի վերայ սեղանոյն, և ասասցէ 'ի ձայն.

Եւ զքոյս 'ի քոյոց քեզ մատուցանեմք, ըստ ամենայնի, և յաղագս ամենեցուն։

Դպիրքն. Յամենայնի օրհնեալ ես։

Մինչ Դպիրքն երգիցեն՝ քահանայն բազկատարած աղօթեսցէ 'ի ծածուկ.

Զքեզ արդարև Տէր Աստուած մեր գովեմք, և գոհանամք հանապազ։ Որ զանց արարեր զմերով անարժանութեամբս, այսպէս ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս։ Ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութեան՝ յորոց յոյժ թափուր եմք, և միշտ ունայն գտանիմք հանապազ։ Այլ 'ի քո բազմազեղ ներողութենէդ ցանկ ապաւինեալ՝ համարձակիմք մերձենալ 'ի սպասաւորութիւն մարմնոյ և արեան միածնի քո տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն։

Սարկաւագն. Աստուծոյ երկիրպագեսցուք։

Դպիրքն. Առաջի քո Տէր։

Քահանայն խոնարհեսցի և ասասցէ.

Երկիրպագանեմք և աղաչեմք, և խնդրեմք 'ի քէն բարերար Աստուած՝ առաքեա 'ի մեզ, և յառաջի եդեալ յընծայս յայս զմշտնջենաւորակից քո, և զէակից սուրբ Հոգիդ։

Եւ կանգնեալ խաչակնքեսցէ զընծայսն՝ ասելով 'ի ցած.

Որով զհաց օրհ✠նեալ մարմին ճշմարտապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Որով զհաց օրհ✠նեալ մարմին ճշմարտապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Որով զհաց օրհ✠նեալ մարմին ճշմարտապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստուգապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստուգապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստուգապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Որով զհաց և զգինի օրհ✠նեալ մարմին և արիւն ճշմարտապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ փոխարկելով Հոգւովդ քով սրբով։

Երիցս անգամ կրկնեսցէ զաղօթս. և սարկաւագն 'ի ցած. Ամէն.

Եւ քահանայն ասասցէ 'ի ձայն.

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութիւն, 'ի քաւութիւն, և 'ի թողութիւն մեղաց։

Եւ ապա տարածելով զձեռս աղօթեսցէ 'ի ծածուկ։

Սովաւ շնորհեա՛ զսէր, զհաստատութիւն, և զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի. սրբոյ եկեղեցւոյ, և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, թագաւորաց աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց, կալելոց, վտանգելոց, աշխատելոց, և որք 'ի պատերազմունս բարբարոսաց։

Սովաւ և օդոց շնորհեա՛ զբարեխառնութիւն, և անդոց զպտղաբերութիւն, և ախտացելոց 'ի պէսպէս ցաւս փութապէս զառողջութիւն։

Սովաւ հանգո՛ զամենեսեան յառաջագոյն 'ի Քրիստոս ննջեցեալսն՝ զեպիսկոպոսունս՝ զերիցունս՝ զսարկաւագունս՝ և զդպիրս սուրբ եկեղեցւոյ քում սրբոյ, և զամենեսեան՝ որք յաշխարհական կարգէ զարս և զկանայս հաւատով վախճանեցաւ։

Ի ձայն.

Ընդ որս և մեզ այց արասցես՝ բարերար Աստուած աղաչեմք։

Ժողովուրդն. Յիշեա՛ Տէր և ողորմեա։

Քահանայն.

Աստուածածնին սրբոյ կուսին Մարիամու, և Յովհաննու Մկրտչին, Ստեփաննոսի նախավկային, և ամենայն սրբոց՝ եղիցի յիշատակ 'ի սուրբ պատարագս աղաչեմք։

Ժողովուրդն. Յիշեա՛ Տէր և ողորմեա։

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն՝ ձեռնամած ասասցէ.

Առաքելոց սրբոց, մարգարէից։

Եւ մինչ սարկաւագն զյարգն ասիցէ, քահանայն զաղօթս ասասցէ, զի 'ի միասին աւարտեսցեն։

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛, և օրհնեա՛ զսուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քոյ, և ազատեցեր խաչիւն սրբով. շնորհեա՛ նմա զանշարժ զխաղաղութիւն։

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛ և օրհնեա՛ զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութեամբ հատանեն 'ի մեզ ըզբանն ճշմարտութեան։

Աստ յետ յիշելոյն զՊապն, յիշեսցէ և զաստիճանըն ըստ պատշաճի և պատւոյն. թէ Պատրիարգ իցէ, թէ Արքեպիսկոպոս իցէ, և թէ Եպիսկոպոս իցէ. Իսկ Կաթուղիկոսն, և կամ Եպիսկոպոսն Հայոց՝ եթէ իցէ հերետիկոս կամ հերձուածող՝ ոչ երբէք, և ոչ ուրեք յիշեսցէ. Իսկ եթէ իցէ ուղղափառ, յիշեսցէ միայն 'ի թեմս և 'ի վիճակի իւրում, և ոչ երբէք արտաքոյ նորին։

Ի ձայն.

Եւս առաւել զսրբազան Պապն մեր՝ զՏէր այս անուն, և զերջանիկ Պատրիարգն մեր՝ ըզՏէր այս անուն. կամ զԱրքեպիսկոպոսն մեր՝ զՏէր այս անուն. կամ զԵպիսկոպոսն մեր՝ ըզՏէր այս անուն. շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ։

Եւ ապա 'ի ձախակողմն սեղանոյն քարոզեսցէ սարկաւագն ձեռամբ աղօթից. [illegible]

Գոհութիւն և փառաբանութիւն։

Եւ ընդ սկսանել սարկաւագին զքարոզս, քահանայն զաղօթս ասիցէ, զի 'ի միասին աւարտեսցեն։

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛ և օրհնեա՛ զքո առաջի կացեալ ժողովուրդս, և զպատարագիս մատուցողս, և պարգևեա՛ սոցա զպիտոյսն և զօգտակարսն։

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛ և օրհնեա՛ զուխտաւորս և զպտղաբերիչս եկեղեցւոյ քոյ սրբոյ, և որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ. և հատո՛ նոցա զպարտս նոցա՝ ըստ ընդարձակ առատութեան քոյ՝ հարիւրապատիկ աստ՝ և 'ի հանդերձելումն։

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛, և զթեա՛ 'ի հոգիս հանգուցելոցն. հանգո՛ զնոսին, և լուսաւորեա՛, և դասաւորեա՛ ընդ սուրբս քո յարքայութեանդ երկնից, և արժանի արա ողորմութեան քում։

Յիշեա՛ Տէր և զհոգի ծառայի քո այս անուն. և ողորմեա՛ նմա ըստ մեծի ողորմութեան քում, և հանգո՛ այցելութեամբ ՚ի լոյս երեսաց քոց, և եթէ կենդանի է. փրկեա՛ զնա յամենայն որոգայթից հոգւոյ և մարմնոյ։

Յիշեա՛ Տէր և զայնոսիկ՝ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս՝ զկենդանիս և զհանգուցեալս. կատարեա՛ զկամս հայցմանց նոցա և զմերս՝ ընդ ուղղորդն, և որ լին է փրկութեամբ։ Եւ փառաւորեա՛ բարերարեցանց զանանց և զերանելի բարութեանց։ Եւ զանեալ զխորհուրդս մեր տաճարացս յընդունակութիւն մարմնոյ և արեան միածնի քո տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Ընդ որում քեզ Հօր ամենակալի՝ հանդերձ կենդանարար և ազատիչ սուրբ Հոգւովդ՝ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Քահանայն զարձնի և խաչակնքելով զժողովուրդն՝ ասելով բարձր.

Եւ եղիցի ողորմութիւն մեծին Աստուծոյ, և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ✠ ընդ ձեզ՝ ընդ ամենեսեան։

Ժողովուրդն. Եւ ընդ հոգւոյդ քում։
Սարկաւագն. Եւ ևս խաղաղութեամբ։
Ժողովուրդն. Տէր ողորմեա՛։
Սարկաւագն. Ամենայն սրբովք զորս։

Եւ անդէն ընդ քարոզութեանն՝ քահանայն բազկատարած խոնարհաբար աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Աստուած ճշմարտութեան և Հայր ողորմութեան գոհանամք զքէն. որ ՚ի վեր քան զերանելի նահապետսն՝ զմեր պարտաւորեցելոցս պատուել մեծարեցեր զբնութիւն։ Զի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ Հայր հաճեցար անուանիլ գթալով։ Եւ այժմ Տէր աղաչեմք զքեզ՝ զայսպիսի առ ՚ի քէն շնորհ և զպատուական անուանադրութեանս շնորհ՝ որ քան օրէ պայծառացուցեալ ծաղկեցո՛ ՚ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ։

Ի ձայն.

Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ երկնաւորդ Հայր, երգել և ասել։

Եւ ժողովուրդքն բազկատարած եղանակեսցեն.

Հայր մեր, որ յերկինս ես։

Եւ մինչ նոքա երգեսցեն՝ քահանայն աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Տէր տերանց, Աստուած աստուածոց թագաւոր յաւիտենական, արարիչ ամենայն արարածոց, Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մի՛ տար զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա՛ ՚ի չարէ, և ապրեցո՛ ՚ի փորձութենէ։

Ի ձայն.

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Քահանայն.

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան։

Ժողովուրդն. Եւ ընդ հոգւոյդ քում։
Սարկաւագն. Աստուծոյ երկրպագեսցուք։
Ժողովուրդն. Առաջի քո Տէր։

Քահանայն խոնարհեսցի և ամենայն ժողովուրդն ընդ նմա ՚ի վայր, և քահանայն աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Որ աղբիւրդ ես կենաց, և բղխումն ողորմութեան Հոգիդ սուրբ, ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկրպագանեն աստուածութեանդ քո։ Պահեա՛ զսոսա ամբողջս։ Տպաւորեա՛ յոգւոջ սոցա զձև մարմնոյ ցուցակի՝ առ ՚ի ժառանգութիւն և ՚ի վիճակ հանդերձելոցդ բարեաց։

Ի ձայն.

Քրիստոսիւ Յիսուսիւ տերամբ մերով, ընդ որում քեզ Հոգւոյդ սրբոյ և Հօր ամենակալի վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ քահանայն առեալ զսուրբ հացն ՚ի ձեռս, սարկաւագն ձայնեսցէ բարձր.

Պռոսխումէ։

Եւ քահանայն բարձրացուցեալ ահեղեն ժողովրդեանն՝ և ասասցէ.

Ի սրբութիւն սրբոց։

Ժողովուրդն բարձր ձայնիւ.

Միայն սուրբ, միայն տէր, Յիսուս Քրիստոս, ՚ի փառս Աստուծոյ Հօր. ամէն։

Քահանայն.

Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ։

Ժողովուրդն. Ամէն։

Քահանայն.

Օրհնեալ Որդի սուրբ Աստուած ճշմարիտ։

Ժողովուրդն. Ամէն։

Քահանայն.

Օրհնեալ Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ։

Ժողովուրդն. Ամէն։

Քահանայն.

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Դպիրքն. Հայր սուրբ, Որդի։

Եւ մինչ նոքա երգիցեն զայս, քահանայն խոնարհեալ, և աղօթեսցէ ՚ի ծածուկ.

Նայեաց տէր մեր Յիսուս Քրիստոս յերկնից ՚ի սրբութենէ քումմէ, և յաթոռոյ փառաց թագաւորութեան քո։ Եկ ՚ի սրբել և ՚ի կեցուցանել զմեզ. որ ընդ Հօր նստիս, և աստ պատարագիս։ Արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ, և ՚ի պատուական յարենէ. և ՚ի ձեռն մեր ամենայն ժողովրդեանս։

Եւ զայս ասացեալ երկրպագեսցէ՝ և համբուրեսցէ զսեղանն, և առեալ զսուրբ մարմինն որ թացեալ է ՚ի պատուական արիւնն, և ասասցէ.

Տէր Աստուած մեր, որ կոչեցեր զմեզ յանուն միածնի Որդւոյ քոյ քրիստոնեայս, և շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգեւոր աւազանաւն ՚ի թողութիւն մեղաց, և արժանի արարեր զմեզ հաղորդել սուրբ մարմնոյ և արեան միածնի քոյ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ Տէր, արա զմեզ արժանի ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ ՚ի մեղաց թողութիւն։ Եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ բարձրացուցեալ ահեղեն ժողովրդեանն, և ասասցէ առ նոսա բարձր.

Ի սուրբ ՚ի սուրբ պատուական մարմնոյ և յարենէ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ ՚ի յերկնից բաշխի ՚ի միջի մերում։ Սա է կեանք ✠, յոյս, յարութիւն, քաւութիւն, և թողութիւն մեղաց։ Սաղմոս ասացէք տեառն Աստուծոյ մերոյ, սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի, որ նստի ՚ի կառս քերովբէականս։

Սարկաւագն ձայնեսցէ բարձր.

Սաղմոս ասացէք տեառն Աստուծոյ։

Դպիրքն եղանակեսցեն.

Քրիստոս պատարագեալ բաշխի։

Մինչ նոքա երգիցեն, քահանայն առցէ զմարմինն ՚ի ձեռն, և համբուրեսցէ պատառաւ առեալ զայս.

Զոր օրհնութիւն, կամ զոր գոհութիւն ՚ի վերայ հացիս և բաժակիս մատուցուք, այլ Յիսուս զքեզ միայն օրհնեմք՝ հանդերձ Հարբդ և ամենասուրբ Հոգւովդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Դարձեալ ասասցէ.

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես Քրիստոս որդի Աստուծոյ, որ բարձեր զմեղս աշխարհի.

*Եւ ընկեցեալ զմասն 'ի բաժակն արեան՝ ասելով.*

Լրումն Հոգւոյն սրբոյ.

*Եւ ապա առեալ զմի մասն 'ի ձեռս իւր, ասասցէ 'ի ծածուկ աղօթանօք և զղջութեամբ առ Հայր.*

Հայր սուրբ, որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ միածնի քոյ, և լուսաւորեցեր մկրտութեամբ հոգևոր աւազանին. Արժանի արա ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն. Տպաւորեա 'ի մեզ զշնորհս Հոգւոյդ սրբոյ՝ որպէս 'ի սուրբ առաքեալսն, որք ճաշակեցին, և եղեն մաքրիչք ամենայն աշխարհի. Եւ արդ՝ տէր Հայր բարերար՝ զհաղորդութիւնս զայս մատուցեալ ճաշակման երեկոյին աշակերտացն՝ թանալով զխաւար մեղաց իմոց. Մի՛ հայիր յանարժանութիւնս իմ. և մի արգելուր ընդ շնորհս Հոգւոյդ սրբոյ. Այլ ըստ անբաւ մարդասիրութեան քոյ, պարգևեա զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց. Որպէս խոստացաւ և ասաց տէր մեր Յիսուս Քրիստոս, թէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, կեցցէ յաւիտեան. Արդ՝ արա զսա մեզ 'ի քաւութիւն, զի որք կերիցեն և արբցեն 'ի սմանէ, հանցեն զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Խաղաղութիւն ✝ ընդ ամենեսեան.

Գոհանամ զքեն Քրիստոս թագաւոր, որ արժանի արարեր զիս զանարժանս հաղորդիլ սուրբ մարմնոյ և արեան քո. Եւ այժմ տէր աղաչեմ զքեզ, մի լիցի սա ինձ 'ի դատապարտութիւն, այլ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց, յառողջութիւն հոգւոյ և մարմնոյ, և 'ի կատարումն ամենայն գործոց առաքինութեան. Որպէս զի սրբեսցէ սա զշունչս իմ, զհոգի և զմարմին իմ. և արասցէ զիս տաճար և բնակարան ամենասուրբ Երրորդութեանդ. Զի ընդ սուրբս քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Յովհաննու Ոսկեբերանին.

Գոհանամ և մեծացուցանեմ և փառաւորեմ զքեզ տէր Աստուած իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուրս յայսմիկ հաղորդակից լինել աստուածային և ահաւոր խորհրդոյ քոյ, անարատ մարմնոյդ և պատուական արեանդ. Վասն այսորիկ զսոսա 'ի բարեխօսութիւն ունելով, աղաչեմ յամենայն աւուրս և 'ի ժամանակս կենաց իմոց՝ ընդ սրբութեան քոյ պահեա զիս. Որպէս զի յիշելով զբարեգթութիւնս քո, և կենդանի լինել ընդ քեզ՝ որ վասն մեր չարչարեցար և մեռար և յարեար. Մի՛ մերձեսցի տէր իմ և Աստուած խորամանկն՝ կնքելով անձին իմոյ պատուական արեամբդ քով. Ամենակարող՝ մաքրեա զիս սուրբ յամենայն մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ. Ամրացո զկեանս իմ տէր յամենայն փորձութենէ. և զպատերազմողն իմ դարձ յետս պատկառեալ և ամաչեցեալ, որչափ յանձնէ 'ի վերայ իմ. Ամրացո զգնացս մտաց և լեզուի իմոյ, և զամենայն ճանապարհս մարմնոյ իմոյ. Լեր հանապազորդ ընդ իս ըստ անսուտ խոստմանց քոյ, թէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ՝ և ես 'ի նմա. Դու ասացեր մարդասէր, կացո զբանս աստուածային անլուծանելի հրամանաց քոց. Քանզի դու ես Աստուած ողորմութեան և գթութեան և մարդասիրութեան, և պարգևիչ ամենայն բարեաց. և քեզ վայել է փառք հանդերձ Հարբդ և ամենասուրբ Հոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Եւ ապա ստանձնագրեալ զինքն, և խնկեալ 'ի Ճշմարտին Աստուծոյ զգեստս հաղորդուածս անձին իւրոյ՝ և ժողովրդեան և ուխտից. և թողութիւն խնդրեալ իւրոց յանցաւորացն թշնամեաց և ատելեաց։ Եւ անդէն առեալ և գոհութեամբ ճաշակեսցէ 'ի մարմնոյն, և արբցէ 'ի բաժակէն՝ ասելով.

**Մարմին քո անապական լիցի ☩ ինձ 'ի կեանս։ Եւ սուրբ արիւն քո 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։**

Եւ թէ սարկաւագ կայցէ, հաղորդեսցի և նա։ Եւ ապա սարկաւագն զսկիհն, և դարձցի առ ժողովուրդն ասելով բարձր.

**Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք։**

Ժողովուրդն ասասցէ բարձր ձայնիւ.

**Աստուած մեր և տէր մեր երևեցաւ։**

Եւ հաղորդեսցի նոր մկրտեալն, բայց ոչ 'ի բերանն, այլ 'ի յափն առեալ զսրբութիւնն։ Եւ ամենայն արժանաւոր ժողովուրդն հաղորդեսցին։ Եւ յետ հաղորդելոյն խաչակնքեալ զժողովուրդն, և ասասցէ բարձր.

**Կեցո Տէր ☩ զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, հովուեա և բարձրացո զսոսա՝ յայսմ հետէ մինչ յաւիտեան։**

Եւ յետ հաղորդութեանն երգեսցեն ժողովուրդն.

**Լցաք 'ի բարութեանց քոց։**

Փոխանակն.

**Գոհանամք զքէն Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սուրբ զեկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաւորի սուրբ Երրորդութիւնդ։ Ալէլուիա։**

**Գոհանամք զքէն Քրիստոս թագաւոր, որ պարգևեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով և արեամբ քով սրբով։ Ալէլուիա։**

**Գոհանամք զքէն Հոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի. անարատ պահեա հաւատով Երրորդութեանդ՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան։ Ալէլուիա։**

Սարկաւագն. **Եւ ևս խաղաղ։ Եւ ևս հաւատով ընկալ։**

Ժողովուրդն. **Գոհանամք զքէն։**

Եւ քահանայն ասասցէ 'ի ծածուկ.

**Գոհանամք զքէն Քրիստոս Աստուած, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ 'ի սրբութիւն կենդանութեան։ Սովին պահեա զմեզ սուրբս և անարատս բնակեալ զմեօք քո աստուածային խնամօքդ։ Հովուեա զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց, և բարերարոյ։ Որով ամրացեալք յամենայն բանսարկուին ընդդիմութեանց, քումդ ևեթ արժանի եղիցուք լսել ձայնի։ Եւ քեզ միայնոյ քաջայաղթ, և ճշմարիտ Հովուիդ հետևել, և առ 'ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից. Աստուած մեր և Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոս։ Որ ես օրհնեալ ընդ Հօր, և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։**

**Խաղաղութիւն ☩ ընդ ամենեսեան։**

**Ամենին, անհաս, երրեակ իսկութեանց, հաւասիչ՝ ընդունող և անբաժանելի միաւորեան սուրբ Երրորդութեանդ, վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։**

Եւ ապա առեալ զԱւետարանն սուրբ 'ի ձեռն իւր. և երկրպագելով համբուրեսցէ զսեղանն։ Եւ իջեալ 'ի մէջ եկեղեցւոյն, ասասցէ զաղօթս։

Ի ձայն.

**Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ Տէր, և սուրբ առնես զյուսացեալս 'ի քեզ։ Կեցո զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո։ Զլրումն եկեղեցւոյ քո պահեա։ Սրբեա զսոսա, որք սիրեցին զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով։ Եւ մի թողուր զյուսացեալս 'ի քեզ։ Զխաղաղութիւն քո պարգևեա ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, և զինուորաց մանկանց նոցա, և ամենայն ժողովրդեանս։ Զի ամենայն տուրք բարիք, և ամենայն պարգևք կատարեալք 'ի վերուստ են**

իջեալ առ 'ի քէն, որ ես Հայր լուսոյ։ Եւ քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ ժողովուրդքն ասասցեն երիս անգամ.

Եղիցի անուն տեառն օրհնեալ։

Եւ քահանայն դարձցի առ ժողովուրդն և ասասցէ 'ի ձայն.

Կատարումն օրինաց և մարգարէից դու ես Քրիստոս Աստուած փրկիչ մեր։ Որ լցեր զամենայն հայրական տնօրէնութիւնս քո։ Լցո՛ և զմեզ Հոգւովդ քով սրբով։

Սարկաւագն. Օրթի։

Քահանայն.

Խաղաղութիւն ✠ ամենեցուն։

Ժողովուրդն. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն. Երկիւղածութեամբ լուարուք։

Քահանայն.

Սրբոյ աւետարանիս որ ըստ Յովհաննու։

Ի Հօրն լուսոյ.

Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր։

Ժողովուրդն. Փառք քեզ տէր Աստուած մեր։

Սարկաւագն. Սուրբ խաչիւս աղա։

Քահանայն.

Պաշտպանեա՛ զժողովուրդս քո Քրիստոս։

Ժողովուրդն. Օրհնեցից զտէր յամենայն ժամ։

Եւ քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն, և ասասցէ բարձր.

Օրհնեալք ✠ եղերուք 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ. և տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան. ամէն։

Եւ դպիրքն ասասցեն զՍաղմոսն ԼԳ.

Ի տէր պարծեսցի անձն իմ։

Եւ ընդ աւարտելն՝ բաշխեսցի նշխար ժողովրդեանն։ Եւ յաւարտմանն դարձցի քահանայն յարեւելս, երկրպագեսցէ առաջի սրբոյ սեղանոյն, և ասասցէ.

Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա՛ ինձ։

Եւ մտեալ յաւանդատունն՝ մերկասցի 'ի զգեստուցն։ Եկեալ առաջի սեղանոյն, երկրպագեսցէ երիցս, և երթիցէ խաղաղութեամբ։

---

## ՍՐԲՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՍ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Յետ յարութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմոն Պետրոս Յիսուս. Սիմոն Յովհաննու, սիրես զիս առաւել քան զսոսա։ Ասէ ցնա. այո Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ։ Ասէ ցնա՝ արածեա՛ զգառինս իմ։ Դարձեալ ասէ ցնա. Սիմոն Յովհաննու, սիրես զիս։ Ասէ ցնա. այո Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ։ Ասէ ցնա՝ արածեա՛ զոչխարս իմ։ Ասէ ցնա երրորդ անգամ. Սիմոն Յովհաննու, սիրես զիս. տրտմեցաւ Պետրոս, զի ասաց ցնա երիցս՝ թէ սիրես զիս. և ասէ ցնա. Տէր՝ դու զամենայն գիտես. և դու ինքն զամենայն ճանաչես, և եթէ սիրեմ զքեզ։ Ասէ ցնա Յիսուս. արածեա՛ զոչխարս իմ։ Ամէն ամէն ասեմ քեզ. զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր՝ և երթայիր յո՛ և կամէիր. և յորժամ ծերանայցես, ձեռս 'ի վեր կալցես. և այլք ածցեն քեզ գօտի, և տարցին՝ ուր ոչն կամիցիս։ Զայս ասաց՝ նշանակեալ թէ որով մահու փառաւոր առնիցէ զԱստուած։ Եւ զայս իբրեւ ասաց, ասէ ցնա. Եկ զկնի իմ։

## ԱԼԷԼՈՒԻԱՅՔ

Ձայն յԾննդեան.

ԿԻՐ. Գոհեա Երուսաղէմ զՏէր, և օրհնեա զԱստուած քո Սիոն.

ԲՇ. Գոհեա Երուսաղէմ զՏէր, և օրհնեա զԱստուած քո Սիոն.

ԳՇ. Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. 'ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ.

ԴՇ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած 'ի Սիոն և քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ.

ԵՇ. Տէր ով կացցէ 'ի խորանի քում. կամ ով բնակեսցէ 'ի լերան սուրբ քո.

ՈՒՐ. Տէր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած.

ՇԲ. Ցնծացէք առ Աստուած օգնական է մեր. աղաղակեցէք առ Աստուած Յակոբայ.

Ալէլուիայք ձայնի Համբարձման.

Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից և մտցէ թագաւոր փառաց.
Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և Տէր մեր ձայնիւ փողոյ.

Ալէլուիայք ձայնի Հոգւոյն սրբոյ.

ԿԻՐ. Ողորմութեամբ Տեառն լի է երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան. և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա.

ԲՇ. Ձայն Տեառն 'ի վերայ ջուրց. և Աստուած փառաց որոտաց, և Տէր ինքն 'ի վերայ ջուրց բազմաց.

ԳՇ. Որպէս իւղ զի իջանէ 'ի գլուխ և 'ի մօրուսն Ահարոնի. և 'ի մօրուացն իջանէ 'ի գրապանս զգեստու նորա.

ԴՇ. Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ. և սուրբ արար զյարկս իւր բարձրեալն.

ԵՇ. Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ.

ՈՒՐ. Յիշեա Տէր զԴաւիթ և զամենայն հեզութիւն նորա.

ՇԲ. Ամբարձան գետք Տէր, և ամբարձին գետք զձայնս իւրեանց. և յարիցեն գետք 'ի գնացս իւրեանց.

Ալէլուիայք ձայնի Յարութեան.

ԱՁ. Դու յարուցեալ գթասցիս 'ի վերայ Սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ.

ԱԿ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն 'ի նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց.

ԲՁ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած 'ի ձայն ցնծութեան.

ԲԿ. Արի Տէր Աստուած իմ 'ի հրամանս քո, զոր պատուիրեցեր. և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեւ. վասն այսորիկ 'ի բարձունս դարձ Տէր.

ԳՁ. Ուրախ եղև Իսրայէլ յարարիչ իւր. որդիք Սիոնի ցնծասցեն 'ի թագաւորն իւրեանց.

ԳԿ. Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որպէս զի ահեղ են խորհրդովք քան զամենայն որդւոց մարդկան.

ԴՁ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ.

ԴԿ. Յարեաւ Աստուած, և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա.

Ալէլուիայք ձայնի Վարդավառի.

ԿԻՐ. Ամպ լուսաւոր հովանի լինէր նոցա. ձայն եղև յամպոյն որ ասէ. դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ.

ԲՃ. Բարձրութիւնք լերանց նորա են. նորա է ծով՝ և նա արար զնա, և զցամաք ձեռք նորա ստեղծին. եկայք երկիրպագ-ցուք նմա. անկցուք և լացցուք Տեառն արարչին մերոյ։

ԳՃ. Քո են երկինք և քո է երկիր, զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր. զհիւսիս և զհարաւ դու արարեր. Թաբոր և Հեր-մոն յանուն քո ցնծասցեն։

Ալէլուիայք Ձայնի Վերափոխման, և Տաղաւարին։

ԿԱ. Արի Տէր 'ի հանգիստ քո. դու և տա-պանակ կտակի սրբութեան քոյ։

ԲՃ. Ուրախ լեր բերկրեալ, և այլն։

ԿՄ. Այսօր ծնաւ որ 'ի Հօրէ, և այլն։

ԳՃ. Ուրախ լիցին երկինք, և ցնծասցէ, և այլն։

Ալէլուիայք Ձայնի Նաւակատեաց Խաչի և Եկեղեցւոյ։

ՃԲ. Սիրեաց Տէր զՍիոն. և ընտրեաց բնա-կել 'ի նմա. աւէ՛ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. 'ի սմա բնա-կեցայց, զի հաճեցայ ընդ սա։

ԿԱ. Տուր զօրութիւն ծառայի քոյ. կեցո՛ զոր-դի աղախնոյ քոյ. և արա առ իս նշան բարութեան։

ԲՃ. Ետուր երկիւղածաց քոց նշան. զի ապ-րեսցին յերեսաց աղեղան։

ԳՃ. Տէր սիրեցի զվայելչութիւն տան քոյ, և զտեղի յարկի փառաց քոց։

ԴՃ. Տէր 'ի տաճար սուրբ իւրում, Տէր յեր-կինս յաթոռ իւրում։

ԵՃ. Որպէս սիրելի են յարկք քո Տէր զօրու-թեանց. ցանկայ՝ և փափագէ անձն իմ 'ի գաւիթս քո. սիրտ իմ և մարմին իմ ցնծասցէ առ Աստուած կենդանի։

ՃԽ. Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապ-րեսցին յերեսաց աղեղան։

ՃԲ. Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո ա-ջով քո, և լուր մեզ։

Ալէլուիայք Ձայնի առաքելոյ Պօղոսի. որք ասին ըստ ձայնից։

ԱՁ. Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

ԱԿ. Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդի-մաներ զիս. և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։

ԲՁ. Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկիւղ մա-հու անկաւ 'ի վերայ իմ։

ԲԿ. Դարձ Տէր և փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր ըստ ողորմութեան քում։

ԳՁ. Վասն անուան քո Տէր քաւեա՛ զմեղս իմ՝ զի բազում եղեն յոյժ։

ԳԿ. Ողորմեա՛ ինձ Տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա՛ զանձն իմ՝ զի խռովեցան ոս-կերք իմ։

ԴՁ. Ցուցեա Տէր զգթութիւնս քո և զողոր-մութիւնս քո, որք են յաւիտենից։

ԴԿ. Տէր ողորմութիւն քոյ յաւիտեան, ըզ-գործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Ալէլուիայք Նորաթագաւորաց։

ԲՃ. Եկայք ցնծասցուք 'ի Տէր, աղաղակես-ցուք առ Աստուած փրկիչ մեր։

ԳՃ. Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր, երգեցէք Տեառն և բարձր արարէք զանուն նորա։

ԵՃ. Բարձր արարից զընտրեալն 'ի ժողովր-դենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա։

Ալէլուիայք Աջոյ Վերաբերից։

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ։ Մտէք առաջի նորա ցնծութեամբ. ծա-նիրուք զի նա է Տէր Աստուած մեր։

Ալէլուիայք Նոյն Մարտիրոսաց։

ԱՁ. Տէր սիրէ զիրաւունս, և ոչ ընդ փոյթ հարկանէ զսուրբս իւր. այլ յաւիտեան պահէ զնոսա։

ԱԿ. Պարծեսցին սուրբքն փառօք, և ցնծասցեն 'ի հանգիստ իւրեանց, և բարձր արասցեն զԱստուած բերանոք իւրեանց։

ԲՁ. Պարծեսցին սուրբքն փառօք, և ցնծասցեն 'ի հանգիստ իւրեանց, և բարձր արասցեն զԱստուած բերանոք իւրեանց։

ԲԿ. Կարդացին արդարքն առ Տէր՝ և Տէր լուաւ նոցա. յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա։

ԳՁ. Վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար 'ի զենումն։

ԳԿ. Ուրախ լիցին ամենեքեան որք յուսացեալ են 'ի քեզ. յաւիտեան ցնծասցեն և բնակեսցիս դու 'ի նոսա։

ԴՁ. Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցեն. որպէս զմայրսն Լիբանանու բազումք եղիցին։

ԴԿ. Բազում նեղութիւնք են արդարոց՝ յամենայնէ փրկէ զնոսա Տէր. և պահէ զամենայն ոսկերս նոցա. և մի 'ի նոցանէ ոչ կորիցէ։

Ալէլուիայք Նոյն Հրեշտակապետաց։

Օրհնութեամբ Տեառն լի եղև երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան. և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նորա։

Համօրէն Մարգարէից։

Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած և զՏէր յաղբերացն Իսրայելի։

Դաւթի և Յակոբայ։

Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ և ոչ ստեաց նմա. 'ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա։

Ամենայն Առաքելոց։

Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. և յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց։
Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչև 'ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

Նախահարցն։

Պատմէ զբան իւր Յակոբայ. զարդարութիւն և զիրաւունս Իսրայելի։

Գրիգորի Լուսաւորչին։

Համբերելով համբերի Տեառն, և նայեցաւ առ իս և լուաւ աղօթից իմոց։

Հայրապետաց և Վարդապետաց։

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Ճգնաւորաց։

Երանելի են որք բնակեալ են 'ի տան Տեառն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։

Կուսանաց։

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ 'ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։
Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա, և զընկերս նորա տարցին նմա։

Թագաւորաց։

Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. 'ի փրկութեան քում՝ ցնծասցէ յոյժ։

Քառասնից. և Երկուց բիւրուց։

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ 'ի հանգիստ։

Մեծի Հինգշաբաթի։

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան ակն յանդիման նեղչաց իմոց։

# ԱՒԵՏԱՐԱՆՔ ԻՒՂԱԲԵՐԻՑ

## ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

### ԳԿ. ԲԿ.

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի, և միւս Մարիամն՝ տեսանել զգերեզմանն։

Եւ ահա շարժումն մեծ եղև, զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ 'ի բաց թաւալեցոյց զվէմն 'ի դրանց անտի, և նստէր 'ի վերայ նորա։

Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն, և հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն։

Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն, և եղեն իբրև զմեռեալս։

Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցկանայսն. Մի երկնչիք դուք, գիտեմ զի զՅիսուս զխաչեալն խնդրէք։

Չէ աստ քանզի յարեաւ, որպէս ասացն. եկայք տեսէք զտեղին ուր կայր։

Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն նորա թէ յարեաւ, և ահա յառաջանայ քան զձեզ 'ի Գալիլեա. անդ տեսանիցէք զնա, ահա ասացի ձեզ։

Եւ ելեալ վաղվաղակի 'ի գերեզմանէ անտի ահիւ և խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատմել աշակերտացն։

Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս և ասէ, Ողջ էք. և նոքա մատուցեալ կալան զոտս նորա և երկիր պագին նմա։

Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Մի երկնչիք, երթայք ասացէք եղբարցն իմոց զի երթիցեն 'ի Գալիլեա և անդ տեսցեն զիս։

Իբրև նոքա գնացին, ահա ոմանք 'ի զօրականացն եկին 'ի քաղաքն և պատմեցին քահանայապետիցն զամենայն որ ինչ եղեն։

Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն, խորհուրդ առեալ՝ արծաթ յոյժ ետուն զօրականացն,

Եւ ասեն. Ասասջիք եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ մեք 'ի քուն էաք։

Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա՝ և զձեզ անհոգս արասցուք։

Եւ նոցա առեալ զարծաթն, արարին որպէս ուսանն. և ել համբաւս այս 'ի հրէից՝ մինչև ցայսօր։

Իսկ մետասան աշակերտքն գնացին 'ի Գալիլեա 'ի լեառնն՝ ուր ժամադիր եղև նոցա Յիսուս։

Իբրև տեսին զնա՝ երկիր պագին նմա, և ոմանք յերկուացան։

Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ. Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ։

Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև 'ի կատարած աշխարհի։

## ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

### ԲՁ. ԳՁ.

Վասն Թաղման եւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ քանզի ուրբաթ էր որ 'ի շաբաթն մտանէր .

Եկեալ Յովսէփ որ յԱրիմաթեայն էր՝ այր պարկեշտ նախարար , որ եւ ինքն իսկ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ . համարձակեցաւ եմուտ առ Պիղատոս , եւ խնդրեաց զմարմինն Յիսուսի :

Եւ Պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ մեռաւ . եւ կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն՝ եհարց զնա եւ ասէ , թէ Արդարեւ այնչափ վաղ մեռաւ :

Եւ իբրեւ ստուգեաց 'ի հարիւրապետէ անտի , շնորհեաց զմարմինն Յովսեփայ :

Եւ Յովսէփ գնեաց կտաւ՝ եւ իջուցեալ զնա պատեաց կտաւովն , եւ եդ 'ի գերեզմանի , զոր էր փորեալ 'ի վիմէ . եւ թաւալեցոյց վէմ մի 'ի դուռն գերեզմանին :

Իսկ Մարիամ Մագդաղենացի եւ Մարիամ Յակովբայ եւ Յովսեայ , տեսին զտեղին ուր եդաւ :

Եւ իբրեւ անց շաբաթն , Մարիամ Մագդաղենացի եւ Մարիամ Յակովբայ եւ Սողոմէ՝ չոգան պատրաստեցին խունկս , զի եկեսցեն օծցեն զնա :

Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան 'ի գերեզմանն ընդ արեւագալն ,

Եւ ասէին ցմիմեանս . Ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն 'ի դրաց գերեզմանին :

Եւ հայեցեալ տեսին զի թաւալեցուցեալ էր զվէմն 'ի գերեզմանէն , քանզի էր մեծ յոյժ :

Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզմանն՝ տեսին երիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ , եւ զարհուրեցան :

Եւ նա ասէ ցնոսա . Մի՛ երկնչիք , զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխաչելեալն , յարեաւ չէ աստ , ահաւասիկ տեղին ուր եդին զնա :

Այլ երթայք ասացէք ցաշակերտս նորա եւ ցՊետրոս , եթէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ 'ի Գալիլեա . անդ տեսանիցէք զնա՝ որպէս ասաց ձեզ :

Եւ իբրեւ լուան՝ ելին եւ փախեան 'ի գերեզմանէն , քանզի դողն հարեալ էին . եւ ոչ ումեք ինչ ասացին , զի երկնչէին :

## ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

### ԱԿ. ԳԿ.

Վասն Թաղման եւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ ահա այր մի անուն Յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեգործ եւ արդար.

Սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս եւ ընդ գործս նոցա. յԱրիմաթեայ քաղաքէ Հրէից, որ եւ ինքն իսկ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ.

Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի.

Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պատանակալաւ, եւ եդ 'ի կռածոյ գերեզմանին, ուր չէր բնաւ ոք եդեալ.

Եւ օրն էր ուրբաթ, եւ շաբաթ լուսանայր.

Եւ երթային զհետ նորա կանայք՝ որ եկեալ էին ընդ նմա 'ի Գալիլեէ. տեսին զգերեզմանն, եւ որպէս եդաւ մարմին նորա.

Դարձան եւ պատրաստեցին խունկս եւ իւղս, եւ 'ի շաբաթուն հանգարտեցին վասն պատուիրանին.

Բայց 'ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ առաւօտն եկին 'ի գերեզմանն. բերին զխունկսն զոր պատրաստեցին, եւ այլ կանայք ընդ նոսա.

Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ 'ի գերեզմանէ անտի.

Եւ մտեալ 'ի ներքս՝ ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի.

Եւ եղեւ ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, եւ ահա արք երկու հասին առ նոսա 'ի հանդերձս լուսաւորս.

Եւ իբրեւ զահի հարան եւ խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա. Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս.

Չէ աստ, այլ յարեաւ. յիշեցէք որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն 'ի Գալիլեա,

Եւ ասէր թէ պարտ է որդւոյ մարդոյ մատնիլ 'ի ձեռս մարդոց մեղաւորաց, եւ 'ի խաչ ելանել եւ յերրորդ աւուր յառնել.

Եւ յիշեցին զբանսն նորա.

Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մետասանիցն եւ այլոցն ամենեցուն.

Եւ էին Մարիամ Մագդաղենացի եւ Յովհաննա եւ Մարիամ Յակոբեայ, եւ այլք ընդ նոսա որ պատմեցին զայս առաքելոցն.

Եւ երեւեցան առաջի նոցա չաղփաղփութիւն բանքն նոցա՝ եւ չհաւատային նոցա.

Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ 'ի գերեզմանն, եւ հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային. եւ գնաց՝ ընդ միտս զարմացեալ թէ զինչ եղեւ.

## ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

### ԱՁ. ԳՁ.

Վասն Թաղման եւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ, որ յԱրիմաթեայ էր աշակերտ Յիսուսի ՚ի ծածուկ վասն ահին Հրէից. զի բարձցէ զմարմինն Յիսուսի. և հրամայեաց Պիղատոս, եկին և բարձին զնա։

Եկն և Նիկոդեմոս որ եկեալ էր առ Յիսուս ՚ի գիշերի զառաջինն, և եբեր զմուռս խառն ընդ հալուէս իբրև լտերս հարիւր։

Առին զմարմինն Յիսուսի և պատեցին կտաւովք խնկովք հանդերձ, որպէս օրէն էր Հրէից պատել։

Եւ էր ՚ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ. և ՚ի պարտիզի անդ գերեզման նոր, յորում ոչ ոք երբէք էր եդեալ։

Անդ վասն ուրբաթուն Հրէից զի մօտ էր գերեզմանն եդին զՅիսուս։

Եւ ՚ի միաշաբաթւոջն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալոյսն ՚ի գերեզման անդր, և տեսանէ զվէմն բարձեալ ՚ի դրաց գերեզմանին։

Ապա ընթանայ և գայ առ Սիմովն Պետրոս և առ միւս աշակերտն զոր սիրէրն Յիսուս, և ասէ ցնոսա. Բարձին զՏէր ՚ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա։

Ել Պետրոս և միւս աշակերտն և գային ՚ի գերեզմանն։

Ընթանային երկոքեան ՚ի միասին, և միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղվաղակի քան զՊետրոս և եկն նախ ՚ի գերեզմանն։

Եւ խոնարհեալ տեսանէ զի կային անդ կտաւքն, բայց ՚ի ներքս ոչ եմուտ։

Եկն և Սիմովն Պետրոս որ գայր զհետ նորա և եմուտ ՚ի գերեզմանն, և տեսանէ զկտաւսն զի կային անդ։

Եւ վարշամակն որ էր ՚ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ առանձին ծալեալ ՚ի մի կողմն։

Յայնժամ եմուտ և միւս աշակերտն, որ եկեալն էր յառաջագոյն ՚ի գերեզմանն, եսես և հաւատաց,

Զի չև ևս գիտէին զգիրս թէ պարտ է նմա ՚ի մեռելոց յառնել։

Չոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն։

Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ ՚ի գերեզմանն,

Եւ տեսանէ երկուս հրեշտակս ՚ի սպիտակս, զի նստէին մի ՚ի սնարից և մի յանոտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի։

Եւ նոքա ասեն ցնա. Կին դու, զի՞ լաս. ասէ ցնոսա, Զի բարձին զՏէրն իմ ՚ի գերեզմանէ աստի, և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա։

Զայս իբրև ասաց, դարձաւ ՚ի թիկունս կոյս, և տեսանէ զՅիսուս զի կայր. և ոչ գիտէր թէ Յիսուս իցէ։

Ասէ ցնա Յիսուս. Կին դու, զի՞ լաս, զո՞ խնդրես. Նմա այնպէս թուեցաւ թէ պարտիզպանն իցէ, ասէ ցնա. Տէր, եթէ դու բարձեր զնա, ասա ինձ ուր եդիր զնա, զի ես առից զնա։

Ասէ ցնա Յիսուս, Մարիամ. և նա դարձաւ և ասէ ցնա եբրայեցերէն, Րաբունի, որ թարգմանի վարդապետ։

Ասէ ցնա Յիսուս. Մի՛ մերձենար յիս, զի չև ևս ելեալ եմ առ Հայր իմ. այլ երթ դու առ եղբարսն իմ, և ասա ցնոսա. Ելանեմ ես առ Հայրն իմ և առ Հայր ձեր, և Աստուածն իմ և Աստուած ձեր։

Գայ Մարիամ Մագդաղենացի և պատմէ աշակերտացն, եթէ եսես նա զՏէր, և զայս ինչ ասաց ցնա։